ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը՝

Լիպարիտ Դրմեյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավար

Գործուղման վայրը և ժամկետները

Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Ստրասբուրգ), 2023թ. հունիսի 4-ից 8-ը ներառյալ:

Գործուղման նպատակը

Գործուղման նպատակը Եվրոպայի խորհրդ Նախարարների կոմիտեի Մարդու իրավուքների հարցերով թիվ 1468-րդ նստաշրջանին մասնակցությունն էր և *Մակուչյանը և Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի* գործով Ադրբեջանի ներկայացրած գործողությունների ծրագրի և դրա հիման վրա կազմված որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի դիքորոշման ներկայացումը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Նիստի բացումից անմիջապես հետո, Լ.Դրմեյանը ներկայացրեց Հայաստանի դիրքորոշումը՝ առաջարկելով որոշման նախագիծը դնել բանավեճի և առանձին քննարկել նախագծի վերաբերյալ Հայաստանի ներակայացրած դիտողությունները:

Ըստ ընթացակարգի՝ նիստի օրակարգի հաստատումով առաջարկված որոշման նախագծերը ավտոմատ կերպով համարվելու էին ընդունված, ինչին առարկում էր Հայաստանը:

Շուրջ երկուս և կես ժամ տևած քննարկումից և բանավեճից հետո ձեռնարկված քայլերի արդյունքում հաջողվեց որոշման նախագիծը հանել նիստի օրակարգից և

հետաձգել քննարկումը և վերսկսել այն Նախարարների կոմիտեի Մարդու իրավունքների հարցերով դեկտեմբերին նախատեսված նիստին:

Սույն նստաշրջանի ընթացքում *Օգանեզովան և այլք ընդդեմ Հայաստանի* գործով ևս Հայաստանի ներկայացրած գործողությունների ծրագրի վերաբերյալ Նախարարների կոմիտեն ընդունեց որոշում, որով ընդհանուր առմամբ ողջունեց ատելության խոսքի և ատելությամբ պայմանավորված հանցագործությունների դեմ պայքարին ուղղված պետության քայլերը:

13 հունիսի, 2022 թ.